# Պարույր Սևակ

## Դու հեռվից ես հարազատ

Միևնույն է, թե հիմա որտեղ ես մաշում
Քո կոշիկները նրբին և քո սիրտը ժանտ,
Իսկ ես այն օրն եմ միայն անմոռաց հիշում,
Երբ սիրով եմ անվանել քեզ «իմ հարազատ»:
...Մոռացել եմ ամեն բան, ինչ սիրտ է մաշում,
Ինչ կոպտորեն եղծում է պատկերը գերող,
Ու մտքիս մեջ քեզ նորից անեղծ եմ հիշում,
Որ մտովին քեզ շոյեմ սիրող ձեռքերով:
Բայց մոտիկից, ես գիտե՛մ, ո՞ղջը կցնդի,
Ողջն անիմաստ կդառնա խաղով քո հիմար,-
Դու հեռվի՞ց ես հարազատ սիրող իմ սրտին,
Ես պատրաստ եմ լոկ հեռվո՛ւմ ապրել քեզ համար...
Գիտեմ՝ այստե՛ղ, ինչ-որ տեղ ինձ մոտ են մաշվում
Քո կոշիկները նրբին և քո սիրտը ժանտ,
Բայց և գիտեմ... ու հեռվո՛ւմ, հեռվի՞ց եմ հաշվում
Քեզ վերստի՛ն սիրելի, նորից հարազա՛տ...